

Աշոտ Թովմասյան

ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բանալի բառեր- ռազմարդյունաբերական համալիր, արտադրություն, սպառազինություն, ռազմական ձեռնարկություններ, ռազմական տեխնիկա, ռազմատեխնիկական համագործակցություն:

Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրի վերլուծությունը անհրաժեշտ ենք համարում սկսել Իսրայելի ստեղծման պատմությունից և առանձնահատկություններից: Ցանկանում ենք մեջբերել Իսրայելի նախկին նախագահ Շիմոն Պերեսի խոսքերը¹. «Մենք երազում էինք մեր հողի մասին, բայց հողը, որ ստացանք, երազանք չէր: Դա մի փոքրիկ կտոր էր: Դրա վրա երկու լիճ կար, մեկը մահացած, մյուսը՝ մահանալիս: Ջուր ընդհանրապես չկար, բնական պաշարներ չկային: Մենք միայնակ էինք, չկար կրոնի եղբայր, լեզվի քույր, պատմության հարևան: Եվ այդ ամենը Հոլոքոստից հետո էր: Մենք գնացինք այնտեղ ու չգիտեինք, թե ինչ անենք: Եվ մենք մտածեցինք՝ բնության մեծագույն հարստությունը մարդն է, մարդն է հարստացրել հողը, ոչ թե հակառակը: Մենք բոլորս դարձանք գիտնականներ: Իսրայելի յուրաքանաչյուր գյուղացի սկսեց սովորել, թե ինչպես կարելի է գյուղատնտեսություն հիմնել առանց հողի ու ջրի: Մենք հիմնեցինք բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված առաջին գյուղատնտեսությունը: Հիշեք, ապագայի համար կարևոր չէ, թե ինչ եք գտնում, այլ այն, թե ինչ եք արտադրում:

Մենք մարդիկ ու զինամթերք չունեինք, երբեք չէինք կռվել, ընդամենը 450 հազար մարդ ունեինք, որոնց մեջ զինվորականներ չկային: Երբ ստեղծվեց Իսրայել պետությունը, պատերազմ էր: Ինչ կարող էինք անել մենք. երկու բան միայն: Առաջինը՝ մարդիկ պետք է խիզախ դառնային, պետք է հասկանայինք, որ այլընտրանք չունենք, միայն պետք է հաղթել, եթե մեկ անգամ պարտվենք՝ վերջ: Երկրորդը՝ քանի որ մենք զենք չունեինք, մենք սկսեցինք այն արտադրել: Սկսեցինք զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը՝ ծառայեցնելով այն բանակին, քանի որ մենակ էինք թշնամական միջավայրում»:

Օրինակելի է Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրի կայացման փորձը: Պատերազմի մշտական վտանգը Իսրայելին ստիպում էր սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության և ձեռք բերման նոր աղբյուրներ գտնել: Սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերումների հարցում գոյություն ունեցող սահմանափակումներով պայմանավորված՝ ռիսկային էր հավանական պատերազմի ժամանակ զինված ուժերի պահանջարկի ապահովման խնդիրը: Այս իսկ պատճառով Իսրայելը սկսեց զարգացնել սեփական ռազմարդյունաբերությունը՝ զուգահեռ ներմուծելով նաև արտասահմանյան երկրների սպառազինությունն ու ռազմական տեխնիկան:

Ոլորտի զարգացման համար արտասահմանից ներմուծվեցին և ներդրվեցին սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության տեխնոլոգիաները, ներգաղթեցին նաև ոլորտի բազմաթիվ մասնագետներ:

Ներկայումս Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրը բաղկացած է մոտ 200 պետական և մասնավոր ձեռնարկություններից, որտեղ աշխատում են շուրջ 40,000² մարդ, որից պետական ձեռնարկություններում մոտ 25,500 մարդ, մասնավոր ձեռնարկություններում մոտ 14,500 մարդ: Արտադրանքի 80%-ը արտահանվում է: Իսրայելը համաաշխարհային վեց տերություններից մեկն է, որը արտադրում է չորս հիմնական տեսակի սպառազինություն՝ ինքնաթիռներ, նավեր, զրահապատ տեխնիկաներ և հրթիռային համակարգեր: 2010 թ. ռազմական արտադրանքի արտահանման ծավալը

¹ «92-ամյա նախկին նախագահի խոսքերը ցնցել են ողջ աշխարհը», <http://henaran.am/140902.html>:

² Экспорт израильской оборонной промышленности за 2007 год, <http://www.newsru.co.il/finance/03sep2008/oboronka307.html>

կազմել է 7.4 միլիարդ դոլար¹: Հաշվի առնելով վերջին տարիների ռազմատեխնիկական համագործակցության զարգացման իրողությունները՝ կարող ենք վստահաբար ասել, որ այդ գումարը աճել է: Համաշխարհային բանկը² և Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտը³ հրապարակում են աշխարհի երկրների ռազմական ծախսերը: Ներկայացնենք Իսրայելի ռազմական ծախսերի տվյալները 2011-2015 թթ. կտրվածքով:

Աղյուսակ 1. Իսրայելի ռազմական ծախսերը, 2011-2015 թթ.

Ցուցանիշի անվանումը	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Իսրայելի ռազմական ծախսերը (մլն ԱՄՆ դոլար)	15,950	16,206	17,110	18,106	16,101
Կենտրոնական կառավարության ծախսերի նկատմամբ տոկոսով	15.6	14.9	15.2	15.7	14.6
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով	5.9	5.7	5.8	5.9	5.4

Այսպիսի բարձր ցուցանիշներ կարող են իրենց թույլ տալ այն երկրները, որոնք ունեն հզոր տնտեսություն՝ գիտելիքահենք բազայով, հասարակական աշխատանքի բարձր արտադրողականությամբ, հայրենասիրական վեհ գաղափարներով տոգորված, երկրի պաշտպանությանը նվիրված արական և իգական սեռի, առանց բացառության, բոլոր տարիքի անդամներով, երկրի բանակին թև ու թիկունք կանգնող հասարակության լայն և ընդգրկուն զանգվածով, անմնացորդ հայրենասեր քաղաքացիներ ունեցող երկրները: Ահա այս իմաստով նրանց անցած ճանապարհը ուսանելի է մեզ համար հատկապես «Ազգ-բանակ» հայեցակարգի լույսի ներքո:

Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրի զարգացումն իրականացվում էր կառավարության կողմից 2000 թ. ընդունված «Բանակ-2010» ծրագրով: Ծրագրի իրականացումն ապահովվում էր ինչպես Իսրայելի բյուջետային միջոցների, այնպես էլ ԱՄՆ-ի շոշափելի ֆինանսատնտեսական օգնության հաշվին: Ռազմարդյունաբերական համալիրում կան նաև ամերիկյան կապիտալի մասնակցությամբ ձեռնարկություններ:

Ռազմարդյունաբերական համալիրի բոլոր ընկերությունները գտնվում են Իսրայելի պաշտպանության նախարարության (ՑԱԽԱԼ) հսկողության տակ՝ անմիջականորեն համակարգվելով պաշտպանության նախարարության գլխավոր տնօրենի և նրա ապարատի կողմից: Պաշտպանության նախարարության կառուցվածքում ռազմական նշանակության ապրանքների գնման և զինված ուժերի ու արտերկիր մատակարարման հարցերով զբաղվում են երկու վարչություններ՝ սպառազինության արտահանման (ՍԻԲԱՏ) և գնումների ու արտադրության (ՄԱՆԽԱՐ):

Սպառազինության արտահանման վարչությունը ղեկավարվում է պաշտպանության նախարարության գլխավոր տնօրենի ապարատի միջոցով: Վարչության հիմնական խնդիրն է սպառազինության և ռազմական տեխնիկայի արտահանման համար բարենպաստ պայմանների ստեղծումը և արտադրանքի վաճառքի հարցերով օգնության ապահովումը: Այս վարչությունը պատասխանատու է ռազմատեխնիկական համագործակցության բոլոր ուղղությունների զարգացման համար: Նա նաև հանդես է գալիս որպես կառավարական գործակալություն, որը պատասխանատու է մարքեթինգի և պաշտպանության նախարարության պաշարներից գույքի իրացման համար:

Գնումների ու արտադրության վարչությունը պատասխանատու է Սպառազինության արտահանման վարչության սպառազինության մատակարարման ծրագրի իրականացման համար, ինչպես սեփական ռազմարդյունաբերական համալիրից, այնպես էլ արտասահմանից իրականացվող գնումների հաշվին: Վարչությունն իրականացնում է

¹ Александр Шульман, Израильский военный экспорт, 2011г., <http://www.alefmagazine.com/pub2686.html>

² The world bank, <http://www.worldbank.org/>
<http://data.worldbank.org/indicator/MS.MIL.XPND.CN>

³ Stockholm international peace research institute,
<https://www.sipri.org/sites/default/files/Milex-constant-USD.pdf>

նաև կոնկրետ ծրագրերով ամերիկյան ռազմական օգնության բաշխումը կորոդինացնում է ռազմարդյունաբերական համալիրի պետական ընկերությունների գործունեությունը: Իսրայելի համար առավել կարևոր ռազմարդյունաբերության մի շարք ձեռնարկություններ անգամ մտնում են վարչության կազմի մեջ առանձին վարչությունների իրավունքներով (օրինակ «Ռաֆայել» կոնցեռնը): Կազմակերպական առումով Գնումների ու արտադրության վարչությունը կազմված է զինված ուժերի և զորքերի տեսակների սպառազինման բաժիններից¹:

Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրի հիմքը կազմում են երեք պետական կորպորացիաներ՝ «Israel Aircraft Industries», «Israel Military Industries» և «Rafael Armament Development Authority of Israel» գիտաարտադրական վարչությունը:

«Israel Aircraft Industries» պետական կորպորացիան (աշխատողների ընդհանուր քանակը՝ 14300 մարդ, վաճառքի ծավալը՝ մոտ 2.2 մլրդ դոլար) արտադրանքի 80%-ը արտահանում է, իսկ 20%-ը մատակարարում է ներքին շուկա: Ընդ որում արտադրանքի 65%-ը ռազմական նշանակության է, իսկ 35%-ը՝ քաղաքացիական: Բաղկացած է մի քանի բաժանմունքներից՝ «Electronics Division», «Technology Division», «Aircraft Division», «Bedek Aviation Group»: Ունի մի շարք մասնաձյուղեր և դուստր ձեռնարկություններ: Դրա գործունեության ոլորտը ներառում է հրթիռատիեզերական ու ավիացիոն տեխնիկայի, հակաօդային պաշտպանության համակարգերի, էլեկտրոնային, օպտիկական և էլեկտրամեխանիկական սարքավորումների հետազոտությունները, մշակումը, արտադրությունը, սպասարկումն ու վաճառքը: Ընկերությունն իրականացնում է տարբեր տիպի ավիացիոն տեխնիկայի մշակում և արդիականացում:

«Israel Military Industries» պետական կորպորացիան (աշխատողների ընդհանուր քանակը կազմում է 3800 մարդ, վաճառքի ծավալը՝ 550 մլն դոլար) արտադրանքի 60%-ից ավելի արտահանում է: Քաղաքացիական նշանակության ապրանքները կազմում են արտադրության մոտ 10%-ը: Կատարում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ ու իրականացնում է հրաձգային ու հրետանային սպառազինության, զրահատեխնիկայի, ռազմամթերքների բոլոր տեսակների, հրթիռային համակարգերի գործարկման կայանքների, ղեկավարման և ուղղորդման համակարգերի, ռադիոէլեկտրոնային տեխնիկայի և այլնի թողարկում:

«Rafael Armament Development Authority of Israel» գիտաարտադրական վարչությունը (աշխատողների ընդհանուր քանակը՝ 4100 մարդ, եկամուտը՝ 510 մլն դոլար) պաշտպանության նախարարությանը կից մասնագիտացված գիտական խումբ է ՍՌՏ-ի նոր տեսակների ԳՀՓԿԱ, արդիականացում, մշակում և արտադրություն վարելու համար: Գործունեության ոլորտը ժամանակակից տեխնոլոգիաների ամբողջ շրջանակն է, այդ թվում՝ զենքի ղեկավարվող և չղեկավարվող համակարգերը, ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցները, համակարգչային համակարգերը, գիշերային տեսանելիության սարքերը, կրակի ղեկավարման համակարգերը, էլեկտրաօպտիկական և հեռաչափական համակարգերը, հրաձգարանների համար սարքավորումները, կապի պաշտպանության համակարգերը²:

2015 թ. Իսրայելի ռազմական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 5.4%-ը, իսկ 1990 թ.՝ 17.5%: Դա չի նշանակում, որ ռազմական ծախսերը կրճատվել են ավելի քան երեք անգամ, այլ աճել է ՀՆԱ-ն: 2005-2014 թթ.-ը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աճել է 1.67 անգամ: Ամերիկյան ռազմական օգնությունը (մոտ 3 մլրդ) կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 1%-ը³:

Ներկայումս Իսրայելի ռազմարդյունաբերությունը զինում է ավելի քան 50 երկրների բանակներ⁴:

¹ Военно-промышленный комплекс Государства Израиль, А.Я.Богуславский, <http://www.liveinternet.ru/users/3589648/post172048922/>

² Военно-промышленный комплекс Государства Израиль, А.Я.Богуславский, <http://www.liveinternet.ru/users/3589648/post172048922/>

³ Марк Аврутин, Динамика роста американской помощи Израилю https://israelections2015.wordpress.com/2016/07/06/avrutin_aidamer_2/

⁴ Оружие Израиля, <http://grimnir74.livejournal.com/5496255.html>

Նշենք նաև, որ ուսումնասիրել ենք նաև Իսրայելի ռազմարդյունաբերական համալիրի արտադրանքի տեսակների մանրամասն ցանկը և կառավարման կառուցվածքը¹, ինչի արդյունքում կարող ենք փաստել, որ Իսրայելում ստեղծվել և բարեհաջող գործում է զարգացած բազմաձյուղ ռազմարդյունաբերական համալիր:

Ամփոփելով հոդվածը՝ նշենք, որ Իսրայելի Պետության փորձը շատ կարևոր է Հայաստանի Հանրապետության համար՝ հաշվի առնելով երկու երկրների նմանությունները՝ տարածքի չափը, բնակչության ազգային յուրահատկությունները (մենթալիտետը) (2016 թ. տվյալներով Իսրայելի Պետության տարածքը 22,080 քառ. կմ է, իսկ բնակչությունը կազմում է մոտ 8.27 մլն մարդ²): Իսրայելն ունի տարածքային հակամարտություն, ինչը ևս նմանություն է Հայաստանի Հանրապետության հետ: Իսրայելն այսօր ունի զարգացած ռազմարդյունաբերական համալիր և Ադրբեյջանի Հանրապետության հետ ունի սպառազինության վաճառքի պայմանագրեր:

ՀՀ պաշտպանության բանակի որակական կազմի և ռազմարդյունաբերական համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներից է նաև «Ազգ-բանակ» հայեցակարգի ներքո շրջանառության մեջ դրված «Պատիվ ունեն» և «Ես եմ» նախագծերը:

Այս խիստ կարևոր ազգանվեր նախաձեռնությունը նախատեսում է հատուկ պայմաններով սպայական ծառայություն առաջարկել աշխարհի 10 առաջատար բուհերից մեկն ավարտած, ինչպես նաև միջազգային օլիմպիադաների հաղթող ուսանողներին: Նրանց ծառայություն կառաջարկվի սպայական պաշտոններում, բայց ռազմարդյունաբերական համալիրում, որտեղ նրանք կկարողանան ավելի մեծ արդյունավետությամբ կիրառել իրենց գիտելիքները³: Նրանք իրենց հետ զինված ուժեր են բերելու նոր գիտելիքներ և հմտություններ, որոնք օգնելու են ավելի արդյունավետ դարձնել նաև զինծառայողների բարոյահոգեբանական դրվածքն ու նվիրումը ազգային բանակին:

Ашот Товмасян, Формирование и управление военно-промышленного комплекса государства Израиль. - В статье представлена история формирования и управления военно-промышленного комплекса Израиля и нынешняя ситуация. Постоянные угрозы национального выживания заставили Израиль найти источники для покупки оружия. Не имея денег для приобретения оружия из внешних источников, Израиль также вкладывает много денег в военной сфере. Развитый диверсифицированный военно-промышленный комплекс был создан в Израиле, и в настоящее время успешно функционирует.

Ключевые слова: военно-промышленный комплекс, производство, оружие, военные фирмы, военная техника, военно-техническое сотрудничество.

Ashot Tovmasyan, The formation and management of the military-industrial complex of the state of Israel. - The article presents the history of the formation and management of Israel's military-industrial complex and the current situation. Constant threats to national survival compelled Israel to find sources for buying weapon. Not having saved money for acquiring weapon from external sources, Israel also invested a large sum in the military sphere. Developed and diversified military-industrial complex has been created in Israel and now operates successfully.

Key words: military-industrial complex, production, weapon, military firms, military equipment, military-technical cooperation

¹ Военно-техническое сотрудничество Израиля с зарубежными странами (2014), М. Фомин, <http://warfiles.ru/show-78803-voenno-tehnicheskoe-sotrudnichestvo-izrailya-s-zarubezhnymi-stranami.html>

² <http://countrymeters.info/ru/Israel>

³ «Վիզեն Սարգսյանը հանդես է եկել հեղափոխական առաջարկներով», <http://www.mediamax.am/am/news/armypolice/23151>: